'ի յիշատակ ծնողացն, և յաւարտ ածելոյ զշինութիւն Տաճարին՝ 'ի Հայրապետութեան ամենայն Հայոց Տեառն Մակարայ. յամի Տեառն 1887 և Հայկական 4378»։

Ըստ որում Սաղիանի ժողովուրդը բաւական օգնութիւն են հասցրել Տաճարիս շինութեանը, ուստի և իրաւունք են ունեցել Տաճարի հիւսիսային պատի վերայ փորագրել տալ հետևեալ արձանագրութիւնը։

«Հիւսիսային որմն Սրբոյ Տաճարիս շինեցաւ օժանդակութեամբ Հասարակութեան Սաղիանի գեղջ ընդ վերակացութեամբ Սահակ քահանայի Յունանեանց 'ի թուին Հայոց 1335—և փրկչական 1886 ամի»։

Իսկ ես լսելով և Տաճարի շինութեան տօմարի մէջ կարդալով, որ Բագուաբնակ հանգուցեալ Թադէոս Աւագ քահանայն Բուդաղեանց և յարգոյ եղբարքն, նոյնպէս և մեծապատիւ Գէորգ Յովհաննիսեան (Եպրօր Իվանիչ) Քալանթարեանցն՝ ամենքը հինգ հարիւր բուբլի են նուիրել Տաճարիս շինութեանը, և տեսնելով, որ սոցա յիշատակը արձանագրելոյ համար յատուկ քարեր են պատրաստուած տաճարի հարաւային պատի վերայ, ինչպէս և յիշեցրին ինձ Սաղիանի Արժ. Սահակ քահանայն և մեր վիճակային Ատենի Ատենադպիր յարգոյ Աբրահամբէկն Ջահվէրտեանց, ուստի, և փորագրել տուեցի այն երկու պատրաստած քարերի վերայ յիշեալ նուիրատուաց անուանքն հետևեալ արձանագրութեամբ.

«Օժանդակեաց շինութեան Տաճարիս հինգ հարիւր բուբլի դրամօք բագուաբնակ Թադէոս Աւագ քահանայն Բուդաղեանց և եղբարք նորին Մովսէս, Եղիա և Ենովք, յամի տեառն 1880»։